ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 1
Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող
Լոռու մարզային հանձնաժողովի նիստի

14.02.2017թ. ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովի անդամներ, հաշմանդամության հարցերով զբաղվող ՀԿ-ների և ՋԼՄ-ների ներկայացուցիչներ, հրավիրյալներ:

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. Հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում վերջին շրջանում կատարված աշխատանքների մասին տեղեկատվության տրամադրում:
   /Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/
2. Հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում 2016թ. ընթացքում կատարված աշխատանքների մասին տեղեկատվության տրամադրում:
   /Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/
3. Տեղեկատվության տրամադրում մարզի զբաղվածության տարածքային կենտրոնների կողմից հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավվածությամբ իրականացված աշխատանքների և գործատուների հետ համագործակցության մասին:
   /Զեկ.՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի «ՀՀ զբաղվածության գործակալության» Վանաձորի կենտրոնի տնօրեն Արա Առաքելյան/
4. Հանձնաժողովի անդամ ունեցող հասարակական կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների մասին տեղեկատվության տրամադրում.
   - «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի Վանաձորի համայնքային կենտրոնի տնօրեն Սուսաննա Մարտիրոսյան
   - «Լուսատղ» ՀԿ նախագահ Անի Գաբրիելյան
   - «Լիարժեք կյանք» ՀԿ-ի Ստեփանավանի մասնաճյուղի տնօրեն Անի Ղուկասյան
5. ՀՀ կառավարության 2017թ. հունվարի 12-ի նիստի N 1 արձանագրային որոշմամբ հաստատված Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021թթ. համալիր ծրագրի մասին և նախատեսվող կամ առաջարկվող միջոցառումների վերաբերյալ:
   /Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/
6. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2017թ. Լոռու մարզային ծրագրի նախագծի քննարկում:
   /Առաջարկների հղումը՝ **jva_1960@mail.ru**
   Հանձնաժողովի քարտուղար Վ.Ջաղինյանին/
7. Պարգևատրություն
   Շնորհակալագիր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի Զբաղվածության պետական գործակալության Վանաձորի տարածքային կենտրոնի տնօրեն **Արա Առաքելյանին**՝ սոցիալական ապահովության բնագավառում ներդրած բազմամյա վաստակի, հասարակական ակտիվ և արդյունավետ գործունեության, ՀՀ-ում զբաղվածության մարմինների ստեղծման 25-ամյակի կապակցությամբ:
8. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանին՝

ա/ ՀՀ կառավարության 2017թ. հունվարի 12-ի նիստի N 1 արձանագրային որոշմամբ հաստատված Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021թթ. համալիր ծրագրի փաստաթղթային փաթեթը հասանելի դարձնել բոլոր շահագրգիռ կառույցներին, դարձնել հրապարակային և այն տրամադրել մարզպետարանի ստորաբաժանումներին և հասարակական կազմակերպություններին:

բ/ Կազմակերպել Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2017թ. Լոռու մարզային ծրագրի նախագծի էլեկտրոնային քննարկում և ներկայացնել վերջնական տարբերակը /ժամկետ՝ 01.03.2017թ./:

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Կազմեց՝ Վ.Ջաղինյանը /2-33-99/